«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ** Սովորողների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում

**ՀԵՂԻՆԱԿ** Մարինե Գաստյան Վալյայի

**ՄԱՐԶ** Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ** Մարալիկի թիվ 2 միջնակարգ դպրոց, ՊՈԱԿ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ----------3 – 4
2. Սովորողների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում
– Կրթությունը իրականացվում է անհատի, հասարակության և պետության շահերից ելնելով----------5 – 9
– Սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի ու արժանապատվության հիմնախնդիրը ժամանակակից դպրոցում-----10 – 17
3. Հետազոտական մաս---------- - 18
4. Եզրակացություն----------19 – 20
5. Գրականություն----------21

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր մանկության արժեքը, դրա պաշտպանության անհրաժեշտությունը հիմնվում են 1989թ. ընդունված միջազգային փաստաթղթի՝ «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ կոնվենցիայի վրա: Քաղաքակիրթ մարդկությունն այս փաստաթղթի ընդունմանը հասավ քայլ առ քայլ: 1924թ. Ազգերի լիգայի շրջանակում ընդունվեց երեխաների իրավունքների մասին Ժնևյան հռչակագիրը: 1948թ. ՄԱԿ Գլխավոր ասամբլեան ընդունեց երեխաների իրավունքների համընդհանուր հռչակագիրը: 1990թ. նրա կողմից ընդունվեց նաև երեխաների իրավունքների պաշտպանության և զարգացման ապահովման մասին համաշխարհային հռչակագիրը: 2002թ. Նյու Յորքում գումարվեց ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի նստաշրջանը, որը բացառապես նվիրված էր երեխաների հիմնախնդրին: Այն առաջ քաշեց «Կառուցենք երեխաների կյանքի համար պիտանի աշխարհ», «Կրթության և առողջապահության ոլորտներում ներդրումները կայուն զարգացման հիմքն են», «Կրթությունը ներդրում է և ոչ թե սպասում», «Մանկության զարգացումից դեպի մարդկության զարգացում» և այլ կարգախոսներ:

Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ կոնվենցիան Հայաստանը վավերացրել է 1992թ. հունիսի 1-ին: Այն մեծ դեր է խաղացել և շարունակում է խաղալ կրթության գործընթացի հումանացման գործում: Ի տարբերություն երեխաների իրավունքների մասին նախկին փաստաթղթերի, կոնվենցիան իրավականորեն պարտավորեցնող գործիք է և ստորագրող երկրների կառավարություններին պարտավորեցնում է կարևորել երեխաների հիմնահարցերը: Այն ընդգծում է, որ մանկությունն անպաշտպան է և մեծերի օգնության ու աջակցության կարիքն ունի, ուստի ավագները պատասխանատու են երեխաների ճակատագրի համար, և կոչ է անում հաշվի առնել, որ մարդու զարգացումն ու կայացումը տեղի են ունենում հենց մանկական տարիներին: Մեր հանրապետությունը «Երեխայի իրավունքների մասին» օրենքն ընդունել է 1996թ. մայիսի 21- ին: Օրենքը մի կողմից սահմանում է երեխայի իրավունքները, մյուս կողմից ամրագրում է պետության, համապատասխան

մարմինների ու քաղաքացիների պարտականությունը երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում:

**Թեմայի արդիականությունը:** Մեր օրերում սոցիալական խնդիրների հիմնարար հետազոտությունները ավելի ու ավելի հաճախ են անդրադառնում կրթական ոլորտին: Դպրոցում դեռ վաղ տարիքից ձևավորվող հարաբերության մոդելները անմիջական ազդեցություն են ունենում ապագայում հասարակական կառուցվածքի և դրա հանրային ընկալման վրա: ՈՒստի այս թեմայի հետազոտությունն այսօր արդիական է:

**Թեմայի նպատակը:** Կրթության մեջ անհատական մոտեցումը դիտարկելով որրպես սոցիալական հավասարության գլխավոր նախապայմաններից մեկը՝ նպատակ ունի աջակցելու ուսուցիչներին՝ գտնելու իր հնարավորությունների սահմաններում մոտեցման իր ձևերը: Այդ կերպ ուսուցիչը կարող է մոտենալ այն միջավայրի ձևավորմանը, որում սոցիալական հավասարության և արդարության սկզբունքները հիմնային են:

Նպատակից ելնելով սահմանենք հետազոտության հետևյալ **խնդիրները**.

1. Ներառական կրթությունը դիտարկել որպես կրթական միջավայրում յուրաքանչյուրի համար հավասար պայմանների ապահովման էական բաղադրիչ:
2. Կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին անհատական մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտություն՝ ելնելով ոչ միայն ընդհանուր, տեսական ախտանիշից, այլև յուրաքանչյուր կենկրետ երեխայի կարիքներից:
3. Հիմնվելով տարիքային հոգեբանության և տվյալ հասարակական միջավայրից բխող նրբությունների վրա՝ ցուցաբերել, մանկավարժական այնպիսի մոտեցում, որը թույլ կտա ձերբազատվելու դպրոցում սոցիալական անհավասարության հիմք հանդիսացող խնդիրներից:
4. ՈՒշադրություն հատկացնել ուսուցիչ – աշակերտ, աշակերտ – աշակերտ, ուսուցիչ – ծնող հարաբերություններին:

Առաջադրված խնդիրների լուծման նպատակով կիրառվել են հետազոտության հետևյալ **մեթոդները**. դիտում, զրույց, հարցում, անկետավորում, փորձարարական ուսուցում:

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԻ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԱՆՀԱՏԻ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ

Սոցիալական հավասարության առաջնային նպատակը կրթության մեջ բոլոր երեխաների համար հավասար հնարավորություն ապահովելն է: ՈՒսուցիչը պետք է հնարավորինս փորձի հնարավորինս կանխել հավասարության և արդարության սկզբունքների ցանկացած խախտում: Հավասարությունը և արդարությունը որպես սկզբունքներդրսևորվում են ամբողջ կրթական գործընթացում:

Դասարան մուտք գործելով՝ երեխաները և ուսուցիչը կազմում են նոր, յուրահատուկ սոցիալական միջավայր, որտեղ հավասարության և արդարության սկզբունքները՝ իբրև սոցիալական հարաբերության դրական կերպարները պետք է պահպանվեն այդ նոր հարաբերության մեջ:

Դպրոցը երեխաների համար նոր միջավայր է: Երեխաները դպրոցում կառուցում են սոցիալական հարաբերություններ և պետք է սովորեն այդ հարաբերությունների հիմքում ունենալ հավասար ու արդար մոտեցում միմյանց նկատմամբ:

Երբ խոսքը կրտսեր դասարանների մասին է, որտեղ սկսվում է այդ հարաբերությունների կառուցումը, պետք է հիշել երեխաների տարիքային առանձնահատկությունների մասին: Երեխաները սովորում են ընդօրինակելով մեծերին: ՈՒսուցիչը դառնում է կենդանի օրինակ իր պահվածքով և վերաբերմունքով: Դասարանում կարող են գործել կանոններ, որոնք ընդհանուր

են բոլորի համար։ Դասարանում նման կանոնների առկայությունը ունի այն նույն նշանակությունը, ինչ ունեն օրենքները ժողովրդավարական հասարակություններում։ Ավելի արդյունավետ է կանոնների մշակման մեջ աշակերտի ներգրավումը, երբ ուսուցիչը հատուկ մշակված հարցերի միջոցով աշակերտների հետ միասին բխեցնում է պատասխաններ, որոնք էլ դառնում են դասարանում կանոններ։

Կանոններն են՝

- լսել, երբ խոսում է ուսուցիչը կամ դասընկերը
- սովորել սպասել իր հերթին
- սնվել միայն հատկացված ժամին
- խոսել, երբ ուսուցիչը թուլ է տալիս

Յուրաքանչյուր դասարանի համար կարելի է մշակել կանոնների առանձնահատուկ ցանկ։ Կանոնների մշակման և դրանց հետևելու նպատակը պետք է լինի ոչ միայն կարգապահության հաստատումը, այլև հավասարության և արդարության սկզբունքների վրա հենված փոխադարձ հարգանքի ձևավորումը։ Եթե երեխաներից մեկը խախտում է կանոնը, և ուսուցիչը դրան չի արձագանքում, ապա կանոններին հետևող մյուս երեխաները, անկասկած, անարդարության զգացում կունենան։ Նույն զգացումը երեխաների մոտ կարող է առաջանալ այն դեպքում, երբ ուսուցիչը նմանատիպ իրավիճակներում տարբեր մոտեցումներ է ցուցաբերում, օրինակ՝ կանոնը խախտելու դեպքում մի երեխայի պատժում է, մյուսի վարքը՝ անտեսում։ Հետևաբար՝ ուսուցչից գերնրբանկատություն և արդարության սկզբունքների մեծ վարպետություն է պահանջվում որոշակի իրավիճակներում հավասարության և արդարության սկզբունքների տարընկալումը նրբորեն համադրելու և հօգուտ աշակերտների առողջ հոգեվիճակի գործելու համար։

Նույն կրթական ծրագիրը չի կարող բավարարել բոլոր երեխաների կրթական պահանջմունքները, քանի որ երեխաները ունեն սովորելու անհատական առանձնահատկություններ։[Экштейн И., «Честь в филасофии и праве» С. Петербург 1985 г. с. 15]։ Այս պարագայում դարձյալ ուսուցչի մանկավարժական

հմտությունն է որոշիչ՝ ուսուցիչը կարող է կիրառել տարբերված մոտեցում՝ չխախտելով հավասարության և արդարության սկզբունքները /խմբային աշխատանք, անհատական առաջադրանքներ և այլն/։

Սովորողն իրավունք ունի՝

1. ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն
2. ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ
3. անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից

- ստանալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը բավարարելուն ուղղված աջակցություն

4. մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների
5. պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժների և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքներն , կամ ոտնձգություն է արվում նրա պատվի ու արժանապատվության հանդեպ
6. ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի
7. ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը
8. ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները
9. օգտվելու օրենքվ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից։

ՈՒսուցիչը միշտ պետք է հաշվի առնի այն, որ գործ ունի կոնկրետ երեխայի հետ, որն ունի իր հետաքրքրությունները, հակումները և պահանջմունքները։ իր կարծիքը հայտնել դասին

- զուգարան գնալ՝ նախազգուշացնելով ուսուցչին
- ուղղել ուսուցչին, եթե նա իր խոսքում սխալ է թույլ տվել դասի թեմայի վերաբերյալ
- զանգը հնչելուց հետո դուրս գալ դասարանից:

ՈՒսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

Մեր կյանքի բոլոր բնագավառներում էլ անհրաժեշտ է պահպանել որոշակի կանոններ, որպեսզի ոչ թե քաոս տիրի, այլ կարգուկանոն: Մեզանից յուրաքանչյուրը անկախ մարդ է, ով պետք է իմանա իր իրավունքները, բայց չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր մարդ ունի նաև որոշակի պարտականություններ:

Եվ ամենից հաճախ այն ժամանակ, երբ երեխան անցնում է դպրոցի շեմը և գալիս է առաջին դասարան, նա պետք է պատկերացում կազմի իր իրավունքների, պարտականությունների մասին:

Սովորողը պարտավոր է՝

1. կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները
2. ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները
3. հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին
4. կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ

Ո՞րն է հավասարության պարտականությունը

«Մենք պետք է հարգենք մեր մերձավորին՝ անկախ նրանց սեռից, սոցիալ – տնտեսական մակարդակից,կրոնից, ազգային պատկանելիությունից կամ նրանց ֆիզիկական և մտավոր արատներից»։

«Մենք պետք է սովորենք հարգել ուրիշների կարծիքներն ու սովորույթները»

ՈՒսուցիչը պետք է իմանա և հարգի աշակերտների իրավունքները, լավ ճանաչի իր աշակերտներին, իմանա նրանց թույլ ու ուժեղ կողմերը, դասավանդելիս հաշվի առնի դրանք և զարգացնի նրանց մոտ սովորելու, քննադատաբար մտածելու, հաղորդակցվելու, համագործակցելու, տեղեկատվությունից օգտվելու կարողություններ, նրանց հետ պլանավորի սովորելու գործընթացը։ Աշակերտը պետք է լինի՝ պարտաճանաչ, գնահատի սովորելու կարևորությունը, կարողանա կառավարել իր սովորելը։ Սրանք դասական մանկավարժության պահանջներն են։

# ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ , ՊԱՏՎԻ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՊՐՈՑՈՒՄ

«Երեխան ծնվելու րոպեից արդեն ոչ թե դաստիարակի, այլ բնության աշակերտն է. դաստիարակը սոսկ ուսումնասիրում է նրան այս առաջին ուսուցչի ձեռքի տակ և հետևում,

որ ապարդյուն չանցնի բնության հոգածությունը»

«Էմիլ կամ դաստիարակության մասին»

Առաջնորդվելով բնական և ազատ դաստիարակության սկզբունքներով՝ Ռուսոն պահանջում էր մինչև 15-16 տարեկան հասակը երեխային մեկուսացնել հասարակական կյանքից, պահել նրան գյուղում, բնության գրկում: Այսպես է վարվում նա Էմիլի հետ, նրա համար ստեղծելով արհեստական միջավայր: Այս պահանջը պայմանավորված էր այն բացառիկ նշանակությամբ, որ Ռուսոն տալիս էր բնության բարերար ազդեցությանը երեխաների վրա: Մյուս կողմից, մեկուսացնելով իր սանին հասարարական կյանքից, Ռուսոն ուզում էր նրան հեռու պահել ազնվականության բարքերից, կեղծ քաղաքակրթությունից: Նա մեկուսացնում էր իր սանին հասարակությունից, որովհետև ըստ նրա՝ ֆեոդալական հասարակարգը՝ իր քաղաքական ստրկությամբ, այլասերված բարքերով և մոլորություններով, մարդու մեջ սպանում է բնությունը:

Բնական և ազատ դաստիարակության սկզբունքները 18-րդ դարում, երբ հրապարակ եկավ Ռուսոյի «Էմիլ կամ դաստիարակության մասին» աշխատությունը

ունեին առաջադիմական նշանակություն, ուղղված էին այն ժամանակվա սոցիալիալական-քաղաքական կարգերի և ֆեոդալական հասարակարգի պաշտոնական դաստիարակության համակարգի դեմ:

«Բնությունը ցանկանում է, որ երեխաները լինեն երեխա, քանի դեռ չեն դարձել մեծահասակ»: Ըստ հայտնի մանկավարժ Ժան Ժակ Ռուսսոյի, երեխան պետք է դաստիարակվի բնական, ազատ և բնության հետ համապատասխան: Իսկ դա, ըստ Ռուսսոյի, նշանակում է, որ դաստիարակության ընթացքում պետք է հետևել երեխայի բնույթին և հաշվի առնել նրա տարիքային առանձնահատկությունները:

Ըստ Ռուսսոյի, բնական դաստիարակությունը և ազատ դաստիարակությունը անխզելիորեն կապված են: Մարդու ամենաառաջին բնական իրավունքներից մեկը՝ նշում է նա, հենց ազատությունն է: Այս կարծիքն արտահայտելով՝ Ռուսսոն հայտնում էր իր բացասական դիրքորոշումը սխոլաստիկ դպրոցի դեմ, որտեղ ընդունված էր անգիրի սկզբունքը, խիստ կարգապահությունը, անազատությունը, անկյուն կանգնեցնելու պատժամիջոցը և երեխայի անձի նկատմամբ ճնշումը: Նա պահանջում էր երեխայի անձի նկատմամբ հարգանք: Պետք է հաշվի նստել երեխայի հետաքրքրությունների հետ, բացահայտել նրա ցանկությունները և ուղղվածությունը: Եվ հենց իր այս սկզբունքն էլ տանում էր դեպի այդ նույն ազատությանը: Ըստ Ռուսսոյի, դաստիարակության մեջ կարևորը երեխային ուղղորդելն է: Դաստիարակողի, ուղղորդողի դերը Ռուսսոն յուրահատուկ է ընկալում: Նա միայն երեխային պետք է սովորեցնի խնդիրները լուծելու ձևը, ոչ թե լուծի այդ խնդիրները երեխայի փոխարեն: Դաստիարակողը պետք է այնպես ղեկավարի երեխայի հետաքրքրությունները, որ երեխան չզգա: Ուղղորդողը /ծնողը, ուսուցիչը, դաստիարակը/ պետք է միջավայրն այնպես կազմակերպի, որ դա տանի երեխայի ազատ և ինքնուրույն մտածողությանը: Նա մերժեց և հանեց պարտադրանքը՝ որպես դաստիարակության մեթոդ:

Անհրաժեշտ ու կարևոր է որ յուրաքանչյուր ծնող, մանկավարժ իր դաստիարակության մեթոդների համակարգից հանի պարտադրանքը, շատ սիրի ու հարգի երեխայի /սովորողի/ կարծիքն ու հետաքրքրությունը:

«Ազատությունը յուրահատուկ միջոց է երեխայի անհատականությունը, բնավորությունը, խելքը և զգացմունքները առավելագույնս զարգացնելու համար»: Մոնտեսորիի մեթոդը հիմնված էր ազատ պայմաններում երեխաների վարքի դիտարկման վրա և հնարավորություն էր տալիս նրանց ազատորեն գործել իրենց իսկ կրթադաստիարակչական կարիքների համար նախատեսված միջավայրում: Ըստ Մարիա Մոնտեսորիի՝ երեխան ի ծնե ազատության և ինքնադաստիարակման պահանջ ունի: Դիտարկումների արդյունքում նա հանգեց այն եզրակացության, որ երեխաների ինքնաբուխ ակտիվությունն այդ միջավայրում բացահայտում է նրանց զարգացման ներքին ծրագիրը, իսկ մանկավարժի համապատասխան խնդիրն է չեզոքացնել այդ բնական զարգացման խոչընդոտները և հնարավորություն ստեղծել դրա շարունակական զարգացման համար: Ըստ Մոնտեսորիի՝ դաստիարակությունը կոչված է զարգացնել երեխայի կամքը, որն անձի կայացման կարևորագույն գործոնն է: Մոնտեսորին ինքը, զբաղված լինելով գիտական և այլ մասնագիտական գործունեությամբ, անձամբ չէր դասավանդում երեխաներին, բայց վերահսկում և դիտարկում էր կրթական գործընթացը, երեխաների վարքը և համապատասխան փոփոխություններ կատարում ուսումնական ծրագրում: Կուտակված փորձն ընդհանրացնելով՝ նա իր տեսությունն ընդլայնում էր նաև ավելի ավագ տարիքի դպրոցահասակ երեխաների կրթադաստիարակչական գործընթացում կիրառելի դարձնելու համար: Ընդհանուր առմամբ, Մոնտեսորիի մանկավարժական տեսության սկզբունքները հետևյալն էին՝ երեխայի ինքնուրույնություն, որոշակի սահմաններում ազատություն և երեխայի հոգեբանական, ֆիզիկական ու սոցիալական բնական համալիր զարգացում: Այդ տեսության հիման վրա թե առաջին Մանկան տանը, թե հետագայում Իտալիայում և աշխարհի բազմաթիվ այլ երկրներում դրա օրինակով բացված դպրոցներում կիրառվում է «ուսուցում՝ բացահայտմամբ» մոդելը, որտեղ սովորողները հասկացություններն ու երևույթներն ուսումնասիրում են ոչ թե ուսուցչի տված բացատրությունների, այլ ուսուցողական նյութերի հետ սեփական աշխատանքի միջոցով:

Մարիա Մոնտեսորիի կրթական-մանկավարժական տեսությունը՝ թե Մանկան տների գործնական օրինակով, թե նրա գիտական հետազոտությունների ու

հանրայնացման ջանքերի արդյունքում, շատ արագ լավ ընդունելություն ու տարածում գտավ նաև Իտալիայի սահմաններից դուրս։

Ընտրված մեթոդաբանությանը համապատասխան, Մանուկների տանը ստեղծվեց երեխայի ակտիվությունը խթանող, ուրույն ազատ միջավայր։ Հրաժարվելով ավանդական սեղան-նստարաններից՝ դասարանները կահավորեցին երեխաների հասակին համապատասխան փոքր, շարժական սեղաններով ու նստարաններով, որոնք երեխաները կարող էին վերադասավորել, բազկաթոռներով, խմբերի համար կլոր սեղանիկներով, Մոնտեսորիի կողմից ստեղծված ուսուցողական հետաքրքրաշարժ նյութերով։ Կրթական առօրյայում ներառված էր երեխաների անձնական հիգիենայի, շրջակա միջավայրի մաքրության ու պահպանության և այլ կենսական հմտությունների ուսուցումը։ Երեխաներն իրենց հակումներին համապատասխան սեփական զբաղմունքի տեսակն ընտրելու և իրագործելու ազատություն ունեին՝ այնքան ժամանակ, որքան կցանկանային։ Ուսուցիչն օգնում էր ընտրելու հարցում, բայց չէր պարտադրում իր կարծիքը։ Միակ օրենքը, որ խստորեն պահպանվում էր, աշխատանքի ավարտից հետո ուսումնական և աշխատանքային պարագաները հավաքելն ու տարածքը մաքրելն էր։ Ընդ որում, նման դասերի ընթացքում կարգապահության խնդիրներ չէին առաջանում։ Մոնտեսորիի կարծիքով կարգապահությունը երեխայի այն ակտիվությունն է, որի դեպքում նա անում է այն, ինչ իրեն պետք է։

Այսօր շատ կարևոր խնդիր է երախայի ազատության հիմնախնդիրը ժամանակակից դպրոցում։ Հետևաբար պետք է այս խնդիրը դիտարկել որպես մեկ ամբողջություն հոգևոր և բարոյական դաստիարակության առումով։

Մեր երկրում երեխաների կրթության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին» օրենքով։ Սահմանադրության 36-րդ հոդվածը և «Կրթության մասին» օրենքի 6-րդ հոդվածը հռչակում են, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք, ընդ որում՝ հիմնական կրթությունը պարտադիր է, միջնակարգ կրթությունն անվճար է, իսկ բարձրագույն և այլ մասնագիտական կրթությունն իրականացվում է մրցութային հիմունքներով։

2003 թվականից պետական հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին պետությունն ապահովում է անվճար դասագրքերով։

Ժամանակակից դպրոցում երեխայի ազատության հիմնախնդրի հիմքում ընկած է մարդուն հարգելու ընդհանուր սկզբունքը, նրա կյանքը, արժանապատվությունը, իրավունքն և ազատությունը։

Դիտարկենք այն օրինաչափությունները, որոնք ազտում են երեխայի ազատ դաստիարակության հիմնախնդրի վրա ժամանակակից դպրոցում.

1. Ազատ դաստիարակության մեջ տիրում են մարդասիրական արժեքներ։ Սրա գործնական կիրառումն երբեմն չի համապատասխանում իրականությանը։ Պրակտիկան այս դեպքում հանդես է գալիս որպես ճշմարտության չափանիշ և ապացույց։
2. Ազատ դաստիարակություն կարող է կիրառվել միայն մարդասիրական ուղղվածություն ունեցող դաստիարակչական համակարգերում։ Նրանք բնութագրվում են երեխայի անձի նկատմամբ հարգանքով, հիմնական նշանակությունը տալիս են աշակերտի ազատությունն դպրոցում։ Այսպիսի համակարգում գործում են ավանդույթները, գոյություն ունեն մեծամասնության կողմից յուրացված վարքագծեր, պատիժների դերը աննշան է։
3. Մարդասիրական դաստիարակչական համակարգը կարող է կիրառվել միայն մարդասիրական հասարակության մեջ։ Այստեղից բխում է ընդհանուր օրինաչափությունը՝ յուրաքանչյուր հասարակության մեջ գոյություն դաստիարակության համակարգ, որը համապատասխանում է տվյալ հասարակության արժեքներին, զարգացման մակարդակին։

Երեխան ունի կրթության իրավունք։ Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է (ՀՀ Սահմանադրություն, հոդված 38)։

Դպրոցական կարգապահությունն պետք է իրականացվի երեխայի մարդկային արժանապատվության հետ համատեղելի մեթոդներով և ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին Կոնվենցիային համապատասխան:

Երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի.

- երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով,
- մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ ամրագրված սկզբունքների նկատմամբ հարգանքի դաստիարակմանը,
- երեխայի ծնողների, նրա մշակութային ինքնատիպության, լեզվի և արժեքների, երեխայի բնակության երկրի ազգային արժեքների, նրա ծագման երկրի և իր սեփական քաղաքակրթությունից տարբեր քաղաքակրթությունների հանդեպ հարգանքի դաստիարակմանը,
- երեխային ազատ հասարակության մեջ, փոխըմբռնման, խաղաղության, հանդուրժողականության, տղամարդու և կնոջ իրավահավասարության և բոլոր ժողովուրդների, էթնիկական, ազգային և կրոնական խմբերի, ինչպես նաև բնիկ ազգաբնակչությանը պատկանող անձանց միջև բարեկամության ոգով պատասխանատու կյանքով ապրելուն նախապատրաստել,
- շրջապատող բնության նկատմամբ հարգանքի դաստիարակմանը:

Դպրոցը երեխայի ազատությունը ապահովելու համար պարտավոր է՝

- Համաձայն կրթական չափորոշիչների՝ ապահովել աշակերտների կողմից ծրագրային նյութի պահանջվող մակարդակի յուրացումը:
- Աշակերտին զինել գիտելիքների հիմունքներով:
- Դասապրոցեսը դարձնել արդյունավետ, ուսուցանվող նյութը՝ հետաքրքիր և մատչելի:
- Օգտագործել ժամանակակից նոր տեխնոլոգիաներ, դասավանդման նոր մեթոդներն ու եղանակները:
- Դասի տեսական մասն ամրապնդել կյանքի կարևոր գործնական հմտություններով ու կարողություններով:

- Օգտագործել ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք կնպաստեն աշակերտների հետաքրքրության, ակտիվության մեծացմանը, ինքնուրույն մտածելու և ստեղծագործելու կարողությանը:
- Ժամանակին անցկացնել և ստուգել թեմատիկ և ամփոփիչ գրավոր աշխատանքները:
- Ճիշտ կառուցել ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունը:
- Կազմակերպել արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ.

- այդ միջոցառումները ու էքսկուրսիաները կազմակերպելիս ներգրավել ակտիվ ծնողներին, միջոցներ ձեռնարկել երեխաների անվտանգությունը ապահովելու համար,

- Կազմակերպել առարկայական խմբակներ, անցկացնել օլիմպիադաներ,առարկայական շաբաթներ:
- Հետևել դպրոցի շենքի և գույքի պահպանմանը:
- Պատասխանատվություն կրել աշակերտների առողջության պահպանման և անվտանգության ապահովման համար:

Աշակերտն իրավունք ունի՝

- Անվճար ստանալու տարրական, հիմնական և միջնակարգ կրթություն,
- Անվճար օգտվելու դպրոցի գրադարանից /բացառությամբ վարձավճարով տրվող դասագրքերից/, պետության կողմից ֆինանսավորվող կաբինետ-լաբորատորիաներից, բուժ. կետից և մյուս ծառայություններից.
- Դպրոցում յուրացնելու վճարովի նախասիրական կրթական ծրագրեր.
- Օգտվելու դպրոցում գործող մյուս վճարովի ծառայություններից.
- Ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները՝ ինչպես բանավոր, գրավոր խոսքի, այնպես էլ արվեստի ստեղծագործությունների միջոցով.
- Մասնակցելու հաստատության ներքին կյանքին, ընտրվելու աշակերտական կազմակեռպության մարմիններում.
- Հրաժարվելու այնպիսի աշխատանքներ կատարելուց, որոնք նախատեսված չեն դպրոցի կանոնադրությամբ և վտանգավոր են կյանքի համար.

- Խրախուսվել օրինակելի վարքի, բարձր առաջադիմության համար, համապատասխան արդյունքներով պարգևատրել գովասանագրով, ոսկե կամ արծաթե մեդալով.
- Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

Հարկ է խոսել նաև աշակերտների պարտականությունների մասին: Աշակերտը պարտավոր է՝

- Կանոնավոր հաճախել ուսումնական պարապմունքներին, անհարգելի պատճառով չուշանալ, չբացակայել դասերից.
- Սովորել բարեխղճորեն, պահպանել մայրենի լեզվի մաքրությունն ու անաղարտությունը.
- Խնամքով վերաբերվել դպրոցի շենքին, գույքին և ունեցվածքին, ծառերին ու թփերին.
- Հարգել դպրոցի սովորողների և աշակերտների իրավունքներն ու արժանապատվությունը.
- Օգնել փոքրերին, հոգատար լինել նրանց նկատմամբ, հարգալից լինել ծնողների, մեծերի, կանանց և աղջիկների նկատմամբ.
- Խնամքով վերաբերվել շրջակա միջավայրին, բնությանը, մասնակցել բնության պահպանման աշխատանքներին, շաբաթօրյակներին.
- Իմանալ և պահպանել անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային, ճանապարհային երթևեկության կանոնները, կարողանալ պաշտպանվել տարերային աղետից.
- Ամենուր պահպանել մաքրություն, անձնական հիգենայի կանոններ, չծխել, չօգտագործել ոգելից խմիչքներ և թմրանյութեր:

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

«Դպրոցը պետք է դառնա մի տեղ, որտեղ դուք ստանում եք ժողովրդավարության բոլոր կողմերը»։

«Մենք ցանկանում ենք կերտել ակտիվ քաղաքացիներ, որոնք կառուցողական են գործում, այլ ոչ թե պարզապես դժգոհում»։

Որպես արժանապատվության անհրաժեշտ պայման Ժ. Ժ. Ռուսոն ընդգծել է. «Հրաժարվել սեփական ազատությունից՝ նշանակում է հրաժարվել մարդկային արժանապատվությունից, մարդկային բնության իրավունքներից և նույնիսկ պարտականություններից։

Հնարավոր չէ, որևէ հատուցում այն մարդուն, ով ամեն ինչից հրաժարվում է։ Նման հրաժարումը անհամատեղելի է մարդկային բնության հետ»[ Бордовская Н.В., А. А. Реан, Педагогика, М., 2006. Коджаспирова Г.М., Педагогика, М., 2004., с 185 ]

Եթե տվյալ անհատը հարգալից վերաբերմունք է դրսևորում այլ անձանց նկատմամբ, ուրեմն դա ինքնահարգման և ինքնաընդունման նշան է։[Актуальные вопрос психологи. Сборник научных трудовб Краснодар. научно – издательский центр Априориб 2012 с.11]

Մարդկային գիտակցությունը ունակ է արտացոլելու ոչ միայն ակտիվ աշխարհը, այլ ինքն իրեն, իր տեղը և կարևորությունը այդ աշխարհում: Արժանապատվության գիտակցումը հանդիսանում է անհատի ինքնագիտակցման կարևորագույն արդյունքը» [Белевскшй А. В.б Придворов Н.А. «Охрана чести и достоинства личности в ССР» М. Юрид. литю 1971г. с. 8]

Այժմ անդրադառնանք պատվի պատվի հասկացությանը: Պատիվը իր արժանիքների համար մեկի վայելած հարգանքն է, փառքը:[Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան 1974թ. էջ 74]

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, դաստիարակությունը և կրթությունը կարևորագույն նախապայմաններ են ստեղծում անձի ազատ զարգացման, ազատության իրավունքի և քաղաքացիական պարտավորությունների գիտակցման ունակություն ձեռք բերելու համար: Ժամանակակից դպրոցն ցանկանում է կատարելագործել կրթական հնարավորությունների բազմազանությունն այնպես, որ յուրաքանչյուր ոք կարողանա լավագույնս օգտվել իր կարողությունների զարգացման համար ընձեռված հնարավորությունից:

- «Մարդը, նրա իրավունքներն ու արժանապատվությունը բարձրագույն արժեք են»:[ՀՀ Սահմանադրություն, հոդված 3, էջ 5]
- Ռ. Շտայները պնդում էր՝ ազատ լինել նշանակում է ունակ լինել բարոյական «երևակայության» շնորհիվ ներքուստ կանխորոշելու մեր գործունեության հիմքում ընկած պատկերացումները, արժեքներն ու դրդիչ հիմքերը: Ազատությունը հնարավոր չէ, եթե ինչ-որ մի բան ինձնից դուրս սահմանում է իմ բարոյական պատկերացումները: Հետևաբար ես ազատ եմ միայն այն դեպքում, երբ ես ինքս եմ ստեղծում այդ պատկերացումները, իսկ այն դեպքերը, երբ ես պարզապես իրականացնում եմ իմ ներսում որևէ այլ էակի

կողմից ներդրված պատկերացումները, ազատության դրսևորումներ համարել չի կարելի:

- Մարդը ստեղծված է ազատ ապրելու: Որպես բարոյական էակ՝ նա պետք է որոշումները բանականությամբ ու պատասխանատվությամբ ընդունի: Անգամ բռնապետական համակարգը ի զորու չէ մարդուց խլել նրա ներքին ազատությունը: Դիմացինի ազատությունն է պայմանավորում և սահմանափակում սեփական ազատությունը: Այնտեղ, որտեղ սկսվում է ուրիշի ազատությունը, ավարտվում է սեփականը:
- Ազատությունը լավ բան է, լավ զգացողություն, արժանապատվության հիմք: Բայց դպրոցում ազատություն հասկացությունն այլ կերպ է ընկալվում: Ճիշտ չէ, երբ աշակերտներ «քարի նման լուռ նստում են դասին»: Ճիշտ է կենդանի հաղորդակցութուն:
- Եթե դասը հետաքրքիր է, ապա դասին խորթ դրսևորումներ չեն լինի: Ուսուցիչը մեծ հոգեբան պետք է լինի նրանց հետ նորմալ հարաբերություններ պահելու համար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան 1974թ. էջ 74
2. ՀՀ Սահմանադրություն, 2004: 3. «Կրթության մասին» ՀՀ օրենքը, էջ 6, Երևան, 1999:
3. Կրթությունը Հայաստանում, Երևան, 2006:
4. ՀՀ Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային ծրագիր 2004-2015թթ., Երևան, 2003:
5. «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը, 1996:
6. Հանրապետության պետական կրթակարգը, Երևան, 2004:
7. Актуальные вопрос психологи. Сборник научных трудовб Краснодар. научно – издательский центр Априориб 2012 с.11
8. Бордовская Н.В., А. А. Реан, Педагогика, М., 2006. Коджаспирова Г.М., Педагогика, М., 2004., с 185
9. Белевскший А. В.б Придворов Н.А. «Охрана чести и достоинства личности в ССР» М. Юрид. литю 1971г. с. 8
10. Экштейн И., «Честъ в филасофии и праве» С. Петербург 1985 г. с. 15